

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„\_\_\_\_\_” \_\_\_\_\_ 2016թ.

„\_\_\_\_\_” \_\_\_\_\_ 2016թ.

(արձանագրություն № )

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) Ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ ՈՒԳԸ) ուսանողների ինքնակառավարման, ներկայացուցչական, ընտրովի բարձրագույն մարմին է:
- 1.2. ՈՒԳԸ-ն իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենսդրությամբ, ՀԱԱՀ կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:
- 1.3. ՈՒԳԸ-ի կողմից իրականացվող աշխատանքներին և ծրագրերին կարող են մասնակցել ինչպես ՀԱԱՀ, այնպես էլ ուսումնակրթական այլ հաստատությունների ուսանողները:
- 1.4. ՈՒԳԸ-ի կանոնակարգը և դրանում կատարվող փոփոխություններն ու լրացումները հաստատվում են ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից:
- 1.5. ՈՒԳԸ-ն, ելնելով իր նպատակներից և խնդիրներից, կարող է ինքնուրույն կապեր հաստատել ՀՀ և արտերկրի հասարակական, ուսումնակրթական և այլ կազմակերպությունների հետ:
- 1.6. ՈՒԳԸ-ի հարաբերությունները ՀԱԱՀ ղեկավար մարմինների հետ կարգավորում են ՀՀ օրենսդրությամբ, ՀԱԱՀ կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և ՀԱԱՀ ռեկտորատի, գիտական խորհրդի ու ՈՒԳԸ-ի համապատասխան որոշումներով:
- 1.7. ՈՒԳԸ-ն իր խնդիրների լուծման համար համագործակցում է ՀԱԱՀ ամբիոնների, Ուսանողական խորհուրդի, արհմիության և այլ ստորաբաժանումների հետ:

## **2. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

2.1. Ուսանողական գիտական ընկերության հիմնական նպատակն է աջակցել, նպաստել ՀԱԱՀ ուսանողների և մագիստրանտների կրթական, գիտական, հետազոտական, ստեղծագործական գործունեությանը, ինչպես նաև կազմակերպել ու համակարգել այդ գործունեությունը:

2.2. Ուսանողական գիտական ընկերության խնդիրներն ու գործունեության ուղղություններն են.

- ա) կրթական, գիտական և հետազոտական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների սատարում, կազմակերպում և իրականացում,
- բ) ուսանողական գիտաժողովների, կոնֆերանսների, սեմինարների, և այլ կրթական ու գիտական ուղղվածություն ունեցող միջոցառումների կազմակերպում,
- գ) ուսանողների գիտական, հետազոտական աշխատանքների հրատարակում,
- դ) ուսանողներին ներգրավում կրթական, գիտական խմբերում և ծրագրերում,
- ե) միջհամալսարանական կրթական և գիտական կապերի հաստատում,

## **3. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

3.1 Ուսանողական գիտական ընկերության բարձրագույն մարմինը ուսանողների ներկայացուցիչների ընդհանուր ժողովն (այսուհետև՝ Ժողով) է, որը հրավիրվում է առնվազն երկու տարին մեկ անգամ:

Ժողովը ձևավորվում է ներկայացուցչական սկզբունքով՝ ցերեկային ուսուցման 20 ուսանողներից ընտրվում է մեկ պատվիրակ, հեռակա ուսուցման 100 ուսանողներից մեկ պատվիրակ:

3.2 Ժողովը՝

- ա) ընդունում է ՈՒԳԸ-ի կանոնակարգը, կատարում է փոփոխություններ և լրացումներ,
- բ) լսում, քննարկում և հաստատում է ՈՒԳԸ-ի նախագահի (այսուհետև նախագահ) հաշվետվությունը,
- գ) փակ գաղտնի քվեարկությամբ ընտրում է ՈՒԳԸ-ի նախագահություն (այսուհետև նախագահություն):

Ժողովն իրավասու է որոշումներ ընդունելու, եթե ներկա են պատվիրակների

առնվազն 2/3-ը:

Սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են մասնակիցների ընդհանուր թվի 2/3-ով, իսկ մնացած դեպքերում՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Արտահերթ ժողով կարող է հրավիրվել ՈԻԳԸ-ի նախագահի և ՈԻԳԸ-ի նախագահության պահանջով:

3.3 Ժողովների միջև ընկած ժամանակահատվածում ՈԻԳԸ-ի աշխատանքային գործունեությունն իրականացնում է Ներկայացուցչական մարմինը, իսկ Ներկայացուցչական մարմնի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում՝ Նախագահությունը, որը նիստեր է գումարում առնվազն ամիսը մեկ անգամ:

3.4 Ներկայացուցչական մարմինը ձևավորվում է համամասնության սկզբունքով՝ ցերեկային ուսուցման 100 ուսանողներից մեկ անդամ, իսկ հեռակա ուսուցման 500 ուսանողներից՝ մեկ անդամ: Ֆակուլտետային ՈԻԳԸ-ները նախապես ներկայացնում են Ներկայացուցչական մարմնի անդամների թեկնածուների համամասնական ցուցակը:

3.5 Ներկայացուցչական մարմինը իրավագոր է, եթե մասնակցում են Ներկայացուցչական մարմնի անդամների առնվազն 2/3-ը: Ներկայացուցչական մարմնի նիստերը կարող են հրավիրվել նաև Ներկայացուցչական մարմնի անդամների 1/3-ի պահանջով:

3.6 Նախագահության նիստերը իրավագոր են, եթե մասնակցում են Նախագահության անդամների առնվազն 2/3-ը: Նախագահության նիստերը կարող են հրավիրվել նաև Նախագահության անդամների 1/3-ի պահանջով:

3.7 Նախագահության կազմը և կառուցվածքը սահմանում է ուսանողների ներկայացուցիչների ընդհանուր ժողովը:

3.8 Նախագահությունը՝

ա) նախապատրաստում և հրավիրում է ՈԻԳԸ-ի ժողովները, նիստերը, հետամուտ լինում ընդունված որոշումների կենսագործմանը, քննարկում ընթացիկ հարցեր,

բ) մշակում է ՈԻԳԸ-ի ընթացիկ և հեռանկարային ծրագրերը:

գ) առաջարկություններ է ներկայացնում կանոնակարգը լրացնելու, փոփոխելու համար,

դ) որոշում է կայացնում ՈԻԳԸ-ի պատվավոր անդամի կոչում շնորհելու մասին,

ե) առաջարկում է թեկնածուներ ՀԱԱՀ ստորաբաժանումների և կառույցների

կազմում ընդգրկելու համար,

զ) ամփոփում և վերլուծում է ուսանողների ընթացիկ առաջադիմության վիճակը,

է) լավագույն ուսանողներին, գիտական հոդվածներ տպագրած, գիտական զեկույցներով հանդես եկած ուսանողներին ներկայացնում է խրախուսման, առաջարկում է անվանական կրթաթոշակների թեկնածուներ:

Սույն կետի <<զ>> և <<դ>> ենթկետերով սահմանված հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են մասնակիցների ընդհանուր թվի 2/3-ով, իսկ մնացած դեպքերում՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

3.9 Նախագահությունը ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ 2 տարի ժամանակով ընտրում է ՈԻԳԸ-ի նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար:

3.10 ՈԻԳԸ-ի նախագահը՝

ա) համալսարանի ռեկտորատի կամ գիտական խորհրդի անդամ է,

բ) ղեկավարում է ՈԻԳԸ-ի ընթացիկ աշխատանքները,

գ) համակարգում է ֆակուլտետային ՈԻԳԸ-ների աշխատանքները,

դ) ներկայացնում է ՀԱԱՀ ՈԻԳԸ-ն,

ե) Նախագահությանը ներկայացնում է թեկնածուներ ՈԻԳԸ-ի պատվավոր անդամ շնորհելու համար:

3.11 Տեղակալը կատարում է նախագահի հանձնարարականները: Նախագահի բացակայության դեպքում նախագահի հանձնարարությամբ համակարգում է բոլոր աշխատանքները:

3.12 Քարտուղարը համակարգում է քարտուղարության աշխատանքը: Քարտուղարի բացակայության դեպքում քարտուղարության աշխատանքները համակարգում է նախագահի տեղակալը:

3.13 Սույն կանոնակարգով չնախատեսված և դրանում չընդգրկված այլ հարցերը կանոնակարգվում են ՀԱԱՀ կառնադրությամբ և Խորհրդի որոշումներով:

#### **4. ՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

4.1. Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերություններն իրականացնում են Ընկերության կանոնադրական նպատակների ու խնդիրների իրականացումը՝ տվյալ ֆակուլտետում:

4.2. Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերության նախագահը ընտրվում է Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերության կողմից՝ ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերության նախագահը կազմակերպում և ներկայացնում է Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերության աշխատանքները, հետևում ՈԻԳԸ ընդհանուր ժողովի որոշումների կատարմանը:

4.3. Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպում ուսանողական գիտաժողովներ, կոնֆերանսներ, սեմինարներ, և այլ կրթական ու գիտական ուղղվածություն ունեցող միջոցառումներ:

4.4. Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերությունը ամբիոնների հետ համատեղ ուսանողներին ներգրավում է կրթական, գիտական խմբերում և ֆինանսավորվող ծրագրերում:

4.5. Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերությունը համալսարանից դուրս գիտական կոնֆերանսների մասնակցած ուսանողներին ներկայացնում է համալսարանի ՈԻԳԸ-ին և համալսարանի ղեկավարությանը խրախուսման:

## **5. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԸ և ԴՐԱՆՑ**

### **ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

5.1. Ընկերության միջոցները օգտագործվում են բացառապես Ընկերության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար:

5.2. Ընկերության միջոցները գոյանում են ՀԱԱՀ ֆինանսական հատկացումներից, հիմնադրամների նվիրատվություններից, այլ կազմակերպություններից, և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

5.3. Ընկերությունն անվճար կարող է օգտվել ՀԱԱՀ գույքային, տարածքային և այլ միջոցներից:

## **6. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

### **ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

6.1 Ուսանողական գիտական ընկերության գործունեությունը դադարեցնում է ընդհանուր ժողովի մասնակիցների առնվազն 2/3-ի որոշմամբ:

6.2 Ուսանողական գիտական ընկերության լուծարումից հետո նրա ամբողջ գույքը և

այլ միջոցները պատկանում են ՀԱԱՀ-ին: